# Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2014 թվականի հոկտեմբերին

(վերլուծություն)

2014 թվականի հոկտեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 19501 գործարք, որոնց քանակը 2014 թվականի սեպտեմբերի համեմատ աճել է 5.6 %-ով, իսկ 2013 թվականի հոկտեմբերի համեմատ՝ 6.9 %-ով:

2014 թվականի հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.




2014 թվականի հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.




2014 թվականի հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4670 օտարման գործարքների 76.2 %-ը կազմել է առուվաճառքը, 23.4 %-ը՝ նվիրատվությունը և 0.4 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 39.4

%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 38.9 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2014 թվականի հոկտեմբերին, 2014 թվականի սեպտեմբերի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 8.8 %-ով, իսկ 2013 թվականի հոկտեմբերի համեմատ՝ 3.7 %-ով:

2014 թվականի հոկտեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 65.5 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2014 թվականի հոկտեմբերին, 2014 թվականի սեպտեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 20.1 %-ով, իսկ 2013 թվականի հոկտեմբերի համեմատ՝ նվազել 3.7 %-ով:

2014 թվականի հոկտեմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ□ մակերեսի հաշվարկով.

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|
| | հոկտեմբեր 2013 թ. | հոկտեմբեր 2014 թ. | սեպտեմբեր 2014 թ. |
| Կենտրոն | 428000 | 428000 | 428000 |
| Արաբկիր | 356600 | 356600 | 356600 |
| Քանաքեռ-Զեյթուն | 282600 | 282700 | 282700 |
| Նոր Նորք | 251800 | 252800 | 252700 |
| Ավան | 260000 | 260200 | 260200 |
| Էրեբունի | 249500 | 250950 | 250900 |
| Շենգավիթ | 255100 | 256600 | 256500 |
| Դավթաշեն | 275000 | 275200 | 275200 |
| Աջափնյակ | 248500 | 249600 | 249600 |
| Մալաթիա-Սեբաստիա | 241800 | 242500 | 242500 |
| Նուբարաշեն | 153000 | 156100 | 156000 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2014 թվականի հոկտեմբերին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ□ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2014 թվականի սեպտեմբերի համեմատ աճել են 0.02 %-ով:

2014 թվականի հոկտեմբերին մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 444 բնակարան, որոնց քանակը, 2014 թվականի սեպտեմբերի համեմատ, աճել է 15.6 %-ով, իսկ 2013 թվականի հոկտեմբերի համեմատ՝ 9.9 %-ով:

2014 թվականի հոկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ□ մակերեսի հաշվարկով,

| Մարզեր | Քաղաքներ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|---|
| | | հոկտեմբեր 2013 թ. | հոկտեմբեր 2014 թ. | սեպտեմբեր 2014 թ. |
| Արագածոտն | Աշտարակ | 114900 | 116000 | 116000 |
| | Ապարան | 57000 | 57550 | 57500 |
| | Թալին | 64850 | 65900 | 65850 |
| Արարատ | Արտաշատ | 94800 | 96850 | 96850 |
| | Մասիս | 115000 | 115700 | 115700 |
| | Վեդի | 99800 | 100700 | 100700 |
| | Արարատ | 75100 | 75500 | 75500 |
| Արմավիր | Վաղարշապատ | 154150 | 154150 | 154150 |
| | Արմավիր | 121200 | 121200 | 121200 |
| | Մեծամոր | 87500 | 87500 | 87500 |
| Գեղարքունիք | Սևան | 99150 | 99200 | 99200 |
| | Գավառ | 59800 | 59850 | 59800 |
| | Մարտունի | 107600 | 107700 | 107650 |
| | Վարդենիս | 44550 | 44800 | 44800 |
| | Ճամբարակ | 28700 | 28700 | 28700 |
| Լոռի | Վանաձոր | 88400 | 88400 | 88400 |
| | Ստեփանավան | 74500 | 74500 | 74500 |
| | Սպիտակ | 99800 | 99800 | 99800 |
| | Ալավերդի | 55000 | 55000 | 55000 |
| | Տաշիր | 47150 | 47300 | 47300 |
| | Թումանյան | 11000 | 11000 | 11000 |
| | Շամլուղ | 8000 | 8000 | 8000 |
| | Ախթալա | 20200 | 20300 | 20200 |
| Կոտայք | Աբովյան | 155100 | 155100 | 155100 |
| | Նոր Հաճն | 128600 | 128600 | 128600 |
| | Բյուրեղավան | 108150 | 108150 | 108150 |
| | Եղվարդ | 109300 | 109400 | 109400 |
| | Հրազդան | 63800 | 63850 | 63800 |
| | Ծաղկաձոր | 292500 | 292500 | 292500 |
| | Չարենցավան | 85500 | 85550 | 85500 |
| Շիրակ | Գյումրի | 109300 | 109300 | 109300 |
| | Արթիկ | 66500 | 66700 | 66700 |
| | Մարալիկ | 40500 | 40700 | 40700 |
| Սյունիք | Գորիս | 121600 | 122400 | 122300 |
| | Կապան | 92100 | 93100 | 93000 |
| | Սիսիան | 91150 | 91250 | 91150 |
| | Մեղրի | 80600 | 80950 | 80900 |
| | Ագարակ | 46850 | 46900 | 46900 |
| | Քաջարան | 94650 | 94700 | 94650 |
| | Դաստակերտ | 8000 | 8000 | 8000 |
| Վայոց ձոր | Վայք | 95000 | 95000 | 95000 |
| | Եղեգնաձոր | 124700 | 125550 | 125500 |
| | Ջերմուկ | 112500 | 112950 | 112900 |
| Տավուշ | Դիլիջան | 113150 | 113300 | 113300 |
| | Իջևան | 118300 | 118300 | 118300 |
| | Բերդ | 60200 | 60250 | 60250 |
| | Նոյեմբերյան | 49800 | 49900 | 49900 |
| | Այրում | 31850 | 31850 | 31850 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2014 թվականի հոկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը,

բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ□ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2014 թվականի սեպտեմբերի համեմատ աճել են 0.1 %-ով:

2014 թվականի հոկտեմբերին հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տների 449 առուվաճառքի գործարք, այդ թվում՝ Երևան քաղաքում՝ 125 գործարք, մարզերում՝ 324 գործարք: 2014 թվականի հոկտեմբերին, 2014 թվականի սեպտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 7.7 %-ով, ընդ որում, Երևանում՝ 3.3 %-ով, իսկ մարզերում՝ 9.5 %-ով: 2014 թվականի հոկտեմբերին 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 5.7 %-ով, ընդ որում, Երևանում՝ 27.6 %-ով, իսկ մարզերում՝ նվազել 0.9 %-ով:

2014 թվականի հոկտեմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ□ և տնամերձի 400.0 մ□ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ□ մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|
| | հոկտեմբեր 2013 թ. | հոկտեմբեր 2014 թ. | սեպտեմբեր 2014 թ. |
| Կենտրոն | 476100 | 476100 | 476100 |
| Արաբկիր | 383000 | 383000 | 383000 |
| Քանաքեռ-Զեյթուն | 295000 | 295000 | 295000 |
| Նորք-Մարաշ | 319200 | 319200 | 319200 |
| Ավան | 270500 | 270500 | 270500 |
| Էրեբունի | 239500 | 239750 | 239750 |
| Շենգավիթ | 255000 | 255000 | 255000 |
| Դավթաշեն | 276000 | 276000 | 276000 |
| Աջափնյակ | 250050 | 250050 | 250050 |
| Մալաթիա-Սեբաստիա | 238000 | 238000 | 238000 |
| Նուբարաշեն | 150500 | 150800 | 150800 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2014 թվականի հոկտեմբերին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1 մ□ մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2014 թվականի սեպտեմբերի համեմատ մնացել են անփոփոխ:

2014 թվականի հոկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ□ և տնամերձի 1000.0 մ□ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ□ մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

| Մարզեր | Քաղաքներ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|---|
| | | հոկտեմբեր 2013 թ. | հոկտեմբեր 2014 թ. | սեպտեմբեր 2014 թ. |
| Արագածոտն | Աշտարակ | 136200 | 136200 | 136200 |
| | Ապարան | 60050 | 60050 | 60050 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Թալին | 69250 | 69250 | 69250 |
| Արարատ | Արտաշատ | 100000 | 100000 | 100000 |
| | Մասիս | 115100 | 115100 | 115100 |
| | Վեդի | 102300 | 102300 | 102300 |
| | Արարատ | 88000 | 88000 | 88000 |
| Արմավիր | Վաղարշապատ | 153100 | 153100 | 153100 |
| | Արմավիր | 107000 | 107000 | 107000 |
| Գեղարքունիք | Սևան | 94800 | 94800 | 94800 |
| | Գավառ | 57100 | 57100 | 57100 |
| | Մարտունի | 96100 | 96100 | 96100 |
| | Վարդենիս | 41000 | 41000 | 41000 |
| | Ճամբարակ | 31100 | 31100 | 31100 |
| Լոռի | Վանաձոր | 100000 | 100000 | 100000 |
| | Ստեփանավան | 90000 | 90000 | 90000 |
| | Սպիտակ | 114000 | 114000 | 114000 |
| | Ալավերդի | 50200 | 50200 | 50200 |
| | Տաշիր | 51900 | 51900 | 51900 |
| | Թումանյան | 12000 | 12000 | 12000 |
| | Շամլուղ | 14000 | 14000 | 14000 |
| | Ախթալա | 30000 | 30000 | 30000 |
| Կոտայք | Աբովյան | 157000 | 157000 | 157000 |
| | Նոր Հաճն | 129800 | 129800 | 129800 |
| | Բյուրեղավան | 120500 | 120500 | 120500 |
| | Եղվարդ | 116100 | 116100 | 116100 |
| | Հրազդան | 82600 | 82600 | 82600 |
| | Ծաղկաձոր | 305000 | 305000 | 305000 |
| | Չարենցավան | 83000 | 83000 | 83000 |
| Շիրակ | Գյումրի | 118500 | 118500 | 118500 |
| | Արթիկ | 63100 | 63100 | 63100 |
| | Մարալիկ | 52000 | 52000 | 52000 |
| Սյունիք | Գորիս | 130000 | 130000 | 130000 |
| | Կապան | 100000 | 100000 | 100000 |
| | Սիսիան | 96500 | 96500 | 96500 |
| | Մեղրի | 84500 | 84500 | 84500 |
| | Ագարակ | 46900 | 46900 | 46900 |
| | Դաստակերտ | 11610 | 11610 | 11610 |
| Վայոց ձոր | Վայք | 90050 | 90050 | 90050 |
| | Եղեգնաձոր | 116600 | 116600 | 116600 |
| | Ջերմուկ | 131300 | 131300 | 131300 |
| Տավուշ | Դիլիջան | 113000 | 113000 | 113000 |
| | Իջևան | 123200 | 123200 | 123200 |
| | Բերդ | 60100 | 60100 | 60100 |
| | Նոյեմբերյան | 48300 | 48300 | 48300 |
| | Այրում | 36250 | 36250 | 36250 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2014 թվականի հոկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 մ$^2$ մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2014 թվականի սեպտեմբերի համեմատ մնացել են անփոփոխ:

Ընդհանուր առմամբ, 2014 թվականի հոկտեմբերին հանրապետությունում օտարվել է 1633 միավոր (745.56 հա) հող, որից Երևանում՝ 130 միավոր (7.35 հա): Օտարված հողերն, ըստ նպատակային նշանակության, բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 904 միավոր (690.68 հա), որից Երևանում՝ 7 միավոր (0.62 հա),
- բնակելի կառուցապատման հողեր՝ 495 միավոր (42.00 հա), որից Երևանում՝ 82 միավոր (4.12 հա),
- հասարակական կառուցապատման հողեր՝ 157 միավոր (7.72 հա), որից Երևանում՝ 37 միավոր (2.35 հա),
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 15 միավոր (1.77 հա), որից Երևանում՝ 4 միավոր (0.26 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 5 միավոր (1.17 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 56 միավոր (1.71 հա) ընդհանուր մակերեսով
- ջրային հողեր՝ 1 միավոր (0.51 հա):

2014 թվականի հոկտեմբերին հանրապետությունում օտարված հողերից 1333 միավորի (636.04 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 111 միավոր (6.09 հա), նվիրատվության գործարքներ՝ 297 միավորի (105.11 հա), որից Երևանում՝ 19 միավոր (1.26 հա) և փոխանակության գործարքներ՝ 3 միավորի (4.41 հա):

Հանրապետությունում 2014 թվականի հոկտեմբերին, 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 23.3%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 35.8 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 1.6 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 15.4 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 136.39 հա, որից 128.96 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 23.9 %-ը կամ 319 միավորը (185.27 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 29 միավոր (1.11 հա), իսկ 75.4 %-ը կամ 1005 միավորը (449.82 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 81 միավոր (4.98 հա): 2014 թվականի հոկտեմբերին հանրապետությունում գրանցվել է հողերի կառուցապատման իրավունքի վաճառքի 9 գործարք (0.95 հա):

Ստորև ներկայացվում է 2014 թվականի հոկտեմբերին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքները.

| | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող | | | | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Գյուղ. նշանակության հողեր | | Արդյունաբերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | | Գյուղ. նշանակության հողեր | | Արդյունաբերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | |
| | | | | | բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր | | հասարակական կառուցապատ. հողեր | | | | | | բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր | | հասարակական կառուցապատ. հողեր | |
| | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) |
| Երևան | 0 | 0.00 | 2 | 0.16 | 16 | 0.59 | 11 | 0.36 | 4 | 0.35 | 2 | 0.10 | 55 | 3.06 | 20 | 1.46 |
| Արագածոտն | 13 | 29.51 | 0 | 0.00 | 3 | 0.10 | 5 | 0.20 | 49 | 60.86 | 0 | 0.00 | 24 | 2.92 | 2 | 0.02 |
| Արարատ | 19 | 79.62 | 0 | 0.00 | 6 | 0.04 | 9 | 0.25 | 97 | 37.86 | 3 | 0.43 | 49 | 4.10 | 4 | 0.06 |
| Արմավիր | 14 | 8.80 | 1 | 0.03 | 6 | 0.28 | 5 | 0.07 | 158 | 120.16 | 0 | 0.00 | 63 | 6.96 | 3 | 0.08 |
| Գեղարքունիք | 1 | 0.08 | 2 | 0.36 | 13 | 1.42 | 11 | 1.13 | 18 | 24.04 | 0 | 0.00 | 13 | 2.21 | 0 | 0.00 |
| Լոռի | 5 | 2.80 | 0 | 0.00 | 7 | 0.07 | 17 | 1.07 | 118 | 61.50 | 0 | 0.00 | 9 | 0.89 | 0 | 0.00 |
| Կոտայք | 10 | 44.89 | 1 | 0.06 | 21 | 0.88 | 10 | 0.32 | 76 | 37.29 | 0 | 0.00 | 77 | 5.58 | 13 | 0.66 |
| Շիրակ | 0 | 0.00 | 2 | 0.40 | 2 | 0.02 | 7 | 0.23 | 50 | 49.22 | 0 | 0.00 | 14 | 1.84 | 1 | 0.01 |
| Սյունիք | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 21 | 15.19 | 0 | 0.00 | 2 | 0.18 | 1 | 0.01 |
| Վայոց ձոր | 5 | 5.16 | 0 | 0.00 | 5 | 0.27 | 5 | 0.02 | 15 | 5.00 | 0 | 0.00 | 7 | 0.71 | 3 | 0.30 |
| Տավուշ | 11 | 3.50 | 2 | 0.24 | 7 | 0.59 | 9 | 0.07 | 18 | 4.95 | 0 | 0.00 | 10 | 0.70 | 2 | 0.22 |
| Ընդամենը | 78 | 174.36 | 10 | 1.25 | 86 | 4.26 | 89 | 3.72 | 624 | 416.42 | 5 | 0.53 | 323 | 29.15 | 49 | 2.82 |

Ստորև ներկայացված է 2014 թվականի հոկտեմբերին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը.

| | Ուղղակի վաճառք | | | | | | | | Վաճառք աճուրդով | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը | | Արդյունաբերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | | Ընդամենը | | Գյուղ. նշանակության հողեր | | Արդյունաբերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | |
| | | | | | բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր | | հասարակական կառուցապ. հողեր | | | | | | | | բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր | | հասարակական կառուցապ. հողեր | |
| | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) |
| Երևան | 13 | 0.421 | 1 | 0.001 | 9 | 0.28 | 3 | 0.14 | 16 | 0.70 | 0 | 0.00 | 1 | 0.16 | 7 | 0.32 | 8 | 0.22 |
| Արագածոտն | 1 | 0.0003 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 1 | 0.0003 | 20 | 29.81 | 13 | 29.51 | 0 | 0.00 | 3 | 0.10 | 4 | 0.20 |
| Արարատ | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 33 | 79.74 | 18 | 79.45 | 0 | 0.00 | 6 | 0.04 | 9 | 0.25 |
| Արմավիր | 2 | 0.023 | 0 | 0.00 | 1 | 0.02 | 1 | 0.003 | 24 | 9.16 | 14 | 8.80 | 1 | 0.03 | 5 | 0.26 | 4 | 0.07 |
| Գեղարքունիք | 1 | 0.004 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 1 | 0.004 | 26 | 2.99 | 1 | 0.08 | 2 | 0.36 | 13 | 1.42 | 10 | 1.13 |
| Լոռի | 11 | 0.16 | 0 | 0.00 | 2 | 0.03 | 9 | 0.13 | 18 | 3.77 | 5 | 2.80 | 0 | 0.00 | 5 | 0.04 | 8 | 0.93 |
| Կոտայք | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 42 | 46.15 | 10 | 44.89 | 1 | 0.06 | 21 | 0.88 | 10 | 0.32 |
| Շիրակ | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 11 | 0.65 | 0 | 0.00 | 2 | 0.40 | 2 | 0.02 | 7 | 0.23 |
| Սյունիք | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 |
| Վայոց ձոր | 1 | 0.004 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 1 | 0.004 | 14 | 5.45 | 5 | 5.16 | 0 | 0.00 | 5 | 0.27 | 4 | 0.02 |
| Տավուշ | 4 | 0.247 | 2 | 0.24 | 1 | 0.002 | 1 | 0.005 | 24 | 3.65 | 10 | 2.99 | 0 | 0.00 | 6 | 0.59 | 8 | 0.07 |
| Ընդամենը | **33** | **0.86** | **3** | **0.24** | **13** | **0.33** | **17** | **0.29** | **228** | **182.07** | **76** | **173.68** | **7** | **1.01** | **73** | **3.94** | **72** | **3.44** |

2014 թվականի հոկտեմբերին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 2 գործարք (0.68 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2014 թվականի հոկտեմբերին, 2013 թվականի հոկտեմբերի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 25.0 %-ով: Ընդ

որում, Երևանում աճել է 20.0 %-ով, իսկ մարզերում՝ 30.5 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 68.9 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ՝ 52.1 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 14.3 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 16.7 %-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2014 թվականի հոկտեմբերին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

| Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միավորների քանակ | Մակերես (հա) | պայմանագրային գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ) | | | Միավորների քանակ | Մակերես (հա) | շուկայական գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ) | | |
| | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին |
| Արագածոտնի մարզ | | | | | | | | | | |
| Աշտարակ | 13 | 29.51 | 63.9 | 792.7 | 288.3 | 23 | 26.08 | 365.0 | 12000.0 | 3715.5 |
| Ապարան | | | | | | 5 | 7.03 | 86.5 | 2727.3 | 675.5 |
| Թալին | | | | | | 15 | 18.14 | 93.6 | 5494.5 | 745.1 |
| Ծաղկահովիտ | | | | | | 5 | 8.84 | 79.5 | 1000.0 | 321.2 |
| Արարատի մարզ | | | | | | | | | | |
| Արտաշատ | | | | | | 50 | 14.93 | 335.1 | 10833.3 | 2552.3 |
| Մասիս | | | | | | 20 | 7.87 | 200.0 | 11904.8 | 2952.0 |
| Վեդի | 18 | 79.45 | 65.0 | 2500.0 | 312.2 | 25 | 11.52 | 207.0 | 10795.1 | 1826.5 |
| Արմավիրի մարզ | | | | | | | | | | |
| Արմավիր | 11 | 8.66 | 60.7 | 69.6 | 62.7 | 62 | 44.63 | 294.3 | 9090.0 | 1211.5 |
| Բաղրամյան | | | | | | 17 | 16.69 | 90.6 | 2561.1 | 835.3 |
| Վաղարշապատ | 3 | 0.14 | 120.0 | 2262.9 | 1462.2 | 76 | 56.16 | 444.4 | 11764.7 | 1980.0 |
| Գեղարքունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գավառ | | | | | | 7 | 1.29 | 199.8 | 1875.0 | 438.5 |
| Ճամբարակ | | | | | | | | 60.5 | 953.3 | 355.2 |
| Մարտունի | | | | | | | | 51.1 | 2850.0 | 775.0 |
| Սևան | | | | | | | | 52.2 | 2134.8 | 328.5 |
| Վարդենիս | 1 | 0.08 | 57.1 | 57.1 | 57.1 | 10 | 20.57 | 41.2 | 2575.1 | 414.5 |
| Լոռու մարզ | | | | | | | | | | |
| Ալավերդի | 1 | 0.08 | 524.7 | 524.7 | 524.7 | 5 | 3.14 | 170.4 | 6424.2 | 596.2 |
| Գուգարք | 2 | 0.60 | 186.7 | 1154.8 | 670.7 | 67 | 13.39 | 234.6 | 6065.9 | 810.0 |
| Սպիտակ | 1 | 0.12 | 687.7 | 687.7 | 687.7 | | | 250.0 | 5555.5 | 705.5 |
| Ստեփանավան | | | | | | 15 | 8.47 | 90.6 | 1686.6 | 352.5 |
| Տաշիր | 1 | 2.01 | 805.2 | 805.2 | 805.2 | 31 | 36.50 | 45.3 | 1384.4 | 180.0 |
| Կոտայքի մարզ | | | | | | | | | | |
| Աբովյան | 1 | 5.93 | 70.9 | 70.9 | 70.9 | 31 | 10.02 | 279.3 | 11942.7 | 4028.8 |
| Եղվարդ | 7 | 31.58 | 96.9 | 535.0 | 247.7 | 24 | 10.57 | 174.4 | 11971.8 | 2438.6 |
| Հրազդան | 2 | 7.38 | 196.4 | 241.6 | 219.0 | 20 | 15.93 | 130.5 | 10256.4 | 1275.5 |
| Շիրակի մարզ | | | | | | | | | | |
| Ախուրյան | | | | | | 23 | 10.06 | 252.0 | 1693.1 | 605.5 |
| Ամասիա | | | | | | 1 | 2.06 | 40.9 | 261.0 | 130.0 |
| Անի | | | | | | 21 | 30.58 | 110.6 | 546.9 | 425.4 |
| Աշոցք | | | | | | 1 | 3.03 | 58.5 | 215.8 | 134.2 |
| Արթիկ | | | | | | 3 | 3.13 | 79.4 | 1428.6 | 470.0 |
| Սյունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գորիս | | | | | | 10 | 9.26 | 92.6 | 1023.2 | 762.4 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Կապան | | | | | | 3 | 0.85 | 120.0 | 841.6 | 385.5 |
| Մեղրի | | | | | | 2 | 0.24 | 193.0 | 3000.0 | 748.3 |
| Սիսիան | | | | | | 5 | 1.04 | 46.3 | 1977.4 | 565.0 |
| Վայոց ձորի մարզ | | | | | | | | | | |
| Եղեգնաձոր | 1 | 0.72 | 343.1 | 343.1 | 343.1 | 8 | 2.41 | 125.0 | 10000.0 | 1846.2 |
| Վայք | 4 | 4.44 | 69.0 | 191.8 | 130.4 | 7 | 2.59 | 58.8 | 1430.7 | 626.4 |
| Տավուշի մարզ | | | | | | | | | | |
| Բերդ | | | | | | 11 | 2.25 | 213.3 | 3783.8 | 690.0 |
| Իջևան | 8 | 1.56 | 153.5 | 157.5 | 154.7 | 3 | 1.05 | 267.5 | 9454.5 | 1325.5 |
| Նոյեմբերյան | 2 | 1.43 | 133.4 | 222.0 | 177.7 | 4 | 1.65 | 46.7 | 7368.4 | 952.3 |

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կախված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2014 թվականի հոկտեմբերին բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 մ² մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

| Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միավորների քանակ | Մակերես (մ²) | պայմանագրային գները 1000.0 մ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ) | | | Միավորների քանակ | Մակերես (մ²) | շուկայական գները 1000.0 մ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ) | | |
| | | | Նվազա-գույն | Առավելա-գույն | Միջին | | | Նվազա-գույն | Առավելա-գույն | Միջին |
| Արագածոտնի մարզ | | | | | | | | | | |
| Աշտարակ | 3 | 1034.5 | 123.2 | 3846.2 | 2585.8 | 20 | 24485.0 | 130.7 | 22200.0 | 2585.3 |
| Ապարան | | | | | | 3 | 2007.0 | 124.1 | 609.6 | 391.1 |
| Թալին | | | | | | 1 | 2700.0 | 63.2 | 1454.8 | 152.4 |
| Ծաղկահովիտ | | | | | | | | 60.0 | 214.3 | 93.0 |
| Արարատի մարզ | | | | | | | | | | |
| Արտաշատ | | | | | | 12 | 7201.4 | 173.9 | 7140.3 | 904.4 |
| Մասիս | 5 | 370.0 | 3015.0 | 3773.3 | 3358.3 | 24 | 21397.7 | 187.5 | 25000.0 | 1215.0 |
| Վեդի | 1 | 52.0 | 1057.7 | 1057.7 | 1057.7 | 9 | 8280.0 | 126.1 | 5000.0 | 665.5 |
| Արմավիրի մարզ | | | | | | | | | | |
| Արմավիր | 4 | 1737.8 | 1305.5 | 3822.0 | 1937.0 | 19 | 25771.0 | 131.6 | 9090.9 | 1213.6 |
| Բաղրամյան | 1 | 870.0 | 233.5 | 233.5 | 233.5 | 3 | 3900.0 | 100.0 | 833.3 | 240.0 |
| Վաղարշապատ | | | | | | 38 | 36321.0 | 197.4 | 26528.4 | 1531.0 |
| Գեղարքունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գավառ | 8 | 10853.7 | 124.5 | 133.6 | 125.8 | 4 | 5320.0 | 186.6 | 1084.3 | 684.3 |
| Ճամբարակ | | | | | | | | 71.3 | 2286.2 | 148.1 |
| Մարտունի | 2 | 814.0 | 393.5 | 393.9 | 393.7 | 3 | 3528.0 | 119.3 | 5000.0 | 285.5 |
| Սևան | 1 | 1000.0 | 1210.9 | 1210.9 | 1210.9 | | | 240.0 | 3110.4 | 330.0 |
| Վարդենիս | 2 | 1486.7 | 49.5 | 198.0 | 123.8 | 3 | 8490.0 | 72.5 | 987.2 | 150.2 |
| Լոռու մարզ | | | | | | | | | | |
| Ալավերդի | 3 | 165.9 | 1650.0 | 1651.7 | 1650.5 | 2 | 2140.0 | 114.3 | 1388.9 | 217.4 |
| Գուգարք | 1 | 24.0 | 1400.0 | 1400.0 | 1400.0 | 3 | 2961.0 | 77.9 | 14083.3 | 1260.0 |
| Սպիտակ | 1 | 229.5 | 1029.1 | 1029.1 | 1029.1 | 3 | 3160.0 | 104.9 | 1348.3 | 207.6 |
| Ստեփանավան | | | | | | 1 | 650.0 | 88.2 | 1666.7 | 175.7 |
| Տաշիր | | | | | | | | 45.3 | 400.0 | 90.0 |
| Կոտայքի մարզ | | | | | | | | | | |
| Աբովյան | 13 | 3529.8 | 1531.6 | 5425.9 | 4354.0 | 46 | 31759.7 | 264.5 | 35353.5 | 2035.0 |
| Եղվարդ | 8 | 5228.5 | 1279.5 | 4599.0 | 2774.5 | 24 | 17158.0 | 173.6 | 27000.0 | 2870.0 |
| Հրազդան | | | | | | 7 | 6870.0 | 117.7 | 34848.5 | 1323.3 |
| Շիրակի մարզ | | | | | | | | | | |
| Ախուրյան | 2 | 193.9 | 3084.2 | 5507.9 | 4296.0 | 3 | 1118.0 | 113.6 | 18750.0 | 336.3 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ամասիա | | | | | | 1 | 3223.3 | 45.3 | 274.7 | 72.0 |
| Անի | | | | | | 6 | 9760.0 | 67.9 | 180.6 | 187.0 |
| Աշոցք | | | | | | | | 40.8 | 144.0 | 65.0 |
| Արթիկ | | | | | | 4 | 4249.2 | 111.8 | 5000.0 | 218.5 |
| Սյունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գորիս | | | | | | 1 | 554.0 | 112.2 | 1700.0 | 370.0 |
| Կապան | | | | | | 1 | 1224.0 | 67.9 | 2638.9 | 330.0 |
| Մեղրի | | | | | | | | 68.5 | 632.9 | 232.5 |
| Սիսիան | | | | | | | | 123.5 | 875.0 | 225.0 |
| Վայոց ձորի մարզ | | | | | | | | | | |
| Եղեգնաձոր | 5 | 2743.6 | 158.4 | 158.4 | 158.4 | 5 | 5127.3 | 96.7 | 7659.6 | 511.0 |
| Վայք | | | | | | 2 | 2010.0 | 120.7 | 1448.3 | 242.5 |
| Տավուշի մարզ | | | | | | | | | | |
| Բերդ | | | | | | | | 75.8 | 810.0 | 121.5 |
| Իջևան | 4 | 4435.9 | 3000.0 | 3000.0 | 3000.0 | 9 | 5535.2 | 74.1 | 14423.1 | 557.5 |
| Նոյեմբերյան | 2 | 1481.2 | 241.7 | 850.7 | 546.2 | 1 | 1500.0 | 125.0 | 1948.1 | 236.0 |

2014 թվականի հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 629 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 3.2 %-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 68.8 %-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2014 թվականի հոկտեմբերին, 2014 թվականի սեպտեմբերի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 3.3 %-ով, իսկ 2013 թվականի հոկտեմբերի համեմատ՝ նվազել 4.9 %-ով:

2014 թվականի հոկտեմբերին հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 55 բնակարանի, 61 անհատական բնակելի տան, 293 հասարակական, 70 արտադրական նշանակության օբյեկտի, 135 հողի և 15 ավտոտնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2014 թվականի հոկտեմբերին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 8 վարձակալության գործարքի քանակը 2014 թվականի սեպտեմբերի համեմատ աճել է 60.0 %-ով, իսկ 2013 թվականի հոկտեմբերի համեմատ՝ նվազել 11.1 %-ով: 2014 թվականի հոկտեմբերին հանրապետությունում վարձակալված 161.61 հա հողերից 0.14 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 161.47 հա հողերից 155.29 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 4.30 հա արդյունաբերական օբյեկտների, 1.00 հա հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Կոտայքի մարզում՝ 60.91 հա, որից 56.51 հա գյուղատնտեսական նշանակության:

2014 թվականի հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2087 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումների քանակի 10.7 %-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2014 թվականի սեպտեմբերի համեմատ, աճել է 7.3 %-ով, իսկ 2013 թվականի հոկտեմբերի համեմատ՝ նվազել 8.2 %-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (52.4 %), անհատական բնակելի տների (23.0 %), հասարակական նշանակության օբյեկտների (11.0 %) և հողերի (8.2 %) նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1168 գրավադրման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2014 թվականի

սեպտեմբերի համեմատ աճել է 6.5 %-ով, իսկ 2013 թվականի հոկտեմբերի համեմատ՝ նվազել 8.4 %-ով:

2014 թվականի հոկտեմբերին հանրապետությունում գրավադրվել է 276.63 հա հող, որից 5.32 հա Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 96.5 %-ը կամ 266.91 հա գյուղատնտեսական նշանակության են, որից 0.37 հա Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արագածոտնի մարզում՝ 115.69 հա, որից 114.93 հա գյուղատնտեսական նշանակության:

2014 թվականի հոկտեմբերին հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 129 գործարք: 2014 թվականի հոկտեմբերին հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2014 թվականի սեպտեմբերի համեմատ, նվազել է 15.1 %-ով, իսկ 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ 22.8 %-ով:

Երևանում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 97 գործարք, որը 2014 թվականի սեպտեմբերի համեմատ է նվազել 1.0 %-ով, իսկ 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ 20.5 %-ով: Մարզերում հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2014 թվականի սեպտեմբերի համեմատ նվազել է 40.7 %-ով, իսկ 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ 28.9 %-ով:

2014 թվականի հոկտեմբերին հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 1947 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որոնց քանակը, 2014 թվականի սեպտեմբերի համեմատ, նվազել է 5.8 %-ով, իսկ 2013 թվականի հոկտեմբերի համեմատ՝ 2.0 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումներում կազմել է 10.0 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (19.3 %):

*ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե*